ԳՈՒՐԳԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
քաղաքական կառավարման և քաղաքական
վերլուծության ամբիոնի հայցորդ

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՐՈՇՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

XXI դարում շարունակվում է սոցիալական համակարգերի կերպափոխումը, ինչն ընթանում է տեղեկատվահաղորդակցական գերակայության հաստատման պայմաններում:

Աշխատանքի հեղինակը հիմնավորում է գիտական գրականության մեջ տարաբնույթ գնահատականների արժանացած այն կարծիքը, թե նոր հասարակարգի պայմաններում կառավարման ամենաարդյունավետ մեթոդը ցանցային կառավարումն է: Ցանցային կառավարումը պետական կառավարման գործընթացում ենթադրում է ազգի ներգրավվածություն, ինչի արդյունքում հասարակության տարբեր շերտերի միջև տեղի է ունենում շահերի զուգամիտում:

Կարևոր է Հայաստանի Հանրապետությունում խթանել ազգային շահի արդիականացումը ցանցային կառավարման պայմաններում և բոլոր քաղաքացիներին ներգրավել պետության կառավարման ու զարգացման գործընթացում:

Հիմնաբառեր. քաղաքակրթություն, ազգ, մշակույթ, զարգացում, արդիականացում, ժամանակի ազդեցություն, սոցիալական համակարգի կերպափոխում, սոցիալ-մշակութային կերպափոխում, ժողովրդավարություն, երկխոսություն:

Արդի քաղաքական գիտությունը բազմաթիվ կարծիքներ է արտահայտում անցման գործընթացներին ուղեկցող ցնցումների, ճգնաժամերի և բախումների վերաբերյալ:

Է. Թոֆլերի կարծիքով, մարդկության սոցիալական վիճակը, հասնելով որոշակի կրիտիկական պահի, «պայթում» և անէացնում է նախկին հասարակարգի բոլոր հետքերը: Վերոնշյալն իր էությամբ հեղափոխություն չէ, քանի որ այն, լինելով մտքի բնական էվոլյուցիայի արդյունք, ի հայտ է գալիս միայն գործող հասարակական կարգերի տրամաբանական վախճանի շրջանում: Այն չի պարտադրվում հակընդդեմ գաղափարախոսությամբ և քաղաքական այլ ընթացք ունեցող որևէ ուժի միջամտությամբ: Վերջինս ստիպում է վերաիմաստավորել և վերաձևակերպել «շահը»: Այսպիսի իրավիճակի ձևավորման պատճառը մշակույթի և իրա-

կանության միջև խորացող անդունդն է կամ դրա թվացյալ առկայության պատկերացումը, ինչը աշխարհընկալման չարդարացված կերպափոխման արդյունքում օտարում է ավանդական արժեհամակարգը:

Համաձայն Յ. Հաբերմասի՝ գիտության, բարոյականության և մշակույթի տարանջատումը, որոնք, ըստ Մաքս Վեբերի, արևմտյան մշակույթի ռացիոնալիզմի հիմնական բնութագրիչներն են, միևնույն ժամանակ նշանակում է մասնագետների կողմից մշակվող ոլորտների ինքնավարացում և այդ ոլորտների մեկուսացում ավանդույթների ներհոսքից, որոնք բնականոն կերպով արդիականանում են առօրյա գործնական կյանքի հերմենևտիկ ազդեցությամբ: Այդ տարանջատումն ինքնին լուրջ խնդիր է, որը ծագում է տարանջատված արժեհամակարգերի առանձին ոլորտների յուրահատկությունների շնորհիվ: Այն նաև ստեղծեց մասնագետների մշակույթի «պարզեցման» անհաջող փորձեր, ինչը հստակ երևում է մշակույթի մեջ [4, էջ 19]:

Աշխարհայացքի արդիականացումը փոփոխում է տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքի բնույթը. կերպափոխվում են քաղաքական, տնտեսական նպատակները, կրոնական նորմերը և ընտանեկան արժեքները: Այդ փոփոխություններն ազդում են տնտեսական աճի տեմպերի, քաղաքական կուսակցությունների ռազմավարական դրույթների և ժողովրդավարական ինստիտուտների հեռանկարների վրա: Առաջավոր արդյունաբերական հասարակության ողջ տարածքում աճման միտում են ձեռք բերում խոսքի ազատությունը և քաղաքական մասնակցությունը: Ամերիկացի սոցիոլոգ Ռ. Ինգլիարտը կարծում է, որ ժամանակակից մարդկությունը գտնվում է արդիականից հետարդիական ժամանակաշրջան անցման փուլում, ինչն ուղեկցվում է չորս տասնյակի հասնող նախադրյալներով: Ըստ նրա՝ փոփոխվում է ողջ մարդկության դիմագիծը՝ տնտեսական ընկալումներից մինչև ընտանիքի կառուցվածք: Արդիականը գործընթաց է, երբ ավելանում են տվյալ հասարակության տնտեսական ու քաղաքական հնարավորությունները, ինչը ենթադրում է տնտեսության արդյունաբերականացում, իսկ քաղաքականության՝ բյուրոկրատացում:

Մոդեռնը գրավիչ է՝ շնորհիվ այն բանի, որ թույլ է տալիս հասարակությանը աղքատ կեցությունից անցնել հարուստ կեցության: Հետարդյունաբերական շրջանն ուղեկցվում է տնտեսության մեջ տեղեկատվական ճյուղի գերակայության հաստատմամբ, պետության դերի նվազմամբ և ոչ պետական կազմակերպությունների հզորացմամբ: Նման գործընթացը չի կարող ընթանալ առանց ցնցումների: Դրանք առաջին հերթին զգացվում են սերունդների միջև անհամերաշխության, դասական ընտանիքի ձևի փոփոխման և անհատի անձնական առանձնահատկության շեշտադրման միջոցով: Կտրուկ տնտեսական առաջընթացը թույլ է տալիս զարգացած

երկրների բնակիչներին շեշտադրումը կատարել կյանքի որակի բարձրացման վրա, այլ ոչ թե տնտեսական կարողությունների ավելացման:

Ըստ էության՝ նոր հասարակարգն առանձնանում է նրանով, որ հասարակության լայն շերտեր ստացան այնպիսի ծավալի տեղեկատվություն և կրթություն, ինչը թույլ տվեց անհատներին խորությամբ ընկալել աշխարհն ու քաղաքականությունը, ընդունակ լինել շարունակ արդիականանալու և որոնելու ինքնիրացման այլընտրանքային ուղիներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցման հնարավորությունների շնորհիվ աշխարհի քաղաքացիների միջև շատ արագ կապ հաստատվեց: Այն շրջանցեց տարածության, ժամանակի և պետական սահմանների ստեղծած խոչընդոտները, ինչի արդյունքում ստեղծվեց բազում միջազգային, միջհանրային, վերպետական և համամոլորակային ցանցերի արարման հնարավորություն, ինչը հաճախ ծառայում է որպես մշակույթների շրջանառման, ապագայի տեսլականի և երազանքների լայն փոխանակման ու հավանությունների նախադրյալ: Դրանք, ըստ էության, մեծ ազդեցություն են ունենում պետական ռազմավարությունների մշակման գործընթացում: Այսինքն՝ տեղի է ունենում կառավարման աստիճանակարգի զուգամիտում ցանցային կառավարման հետ: Վերջինս իր համատեղման, փոխլրացման և դերերի պատվիրակման հատկանիշներով հանդերձ ներկայանում է իբրև ապագայի՝ հետարդիական հասարակարգի մոդել: Այս համատեքստում միանգամայն արդյունավետ կլինի ՀՀ արտաքին քաղաքականության շնորհիվ ձևավորել տարբեր մակարդակների ցանցային համագործակցությունների բազմավեկտոր և բազմամակարդակ հարաբերություններ, որոնց շնորհիվ երկիրը կկարողանա հավասարակշռված քաղաքականություն վարել տարածաշրջանում: Դա ենթադրում է, որ միևնույն երկիրը, գոյություն ունենալով աշխարհամասերի հատման կետում, համաշխարհային քաղաքականության թատերաբեմում հնարավորություն ունի ներկայանալու տարբեր նախաձեռնություններով, ինչը հնարավորություն կտա տվյալ երկրին խաղարկելու իր շահային արժեհամակարգը «և՛, և՛, և՛» սկզբունքով: Հայաստանի Հանրապետությունն իր աշխարհագրական դիրքով այդպիսի երկիր է: Այն, գտնվելով Հարավային Կովկասում, սերտորեն կապված է ինչպես ընդհանուր Կովկասի, այնպես էլ և՛ Մերձավոր Արևելքի, և՛ Եվրոպայի, և՛ նախկին ԽՍՀՄ տարածքի, և՛ Սևծովյան, և՛ Միջերկրածովյան ավազանների հետ: Այդ հանգամանքը կարևորվում է նրանով, որ վերոնշյալ տարածքներում յուրաքանչյուր իրավիճակ անուղղակի և ուղղակի ազդեցություն է ունենում ՀՀ ռազմավարական հետաքրքրությունների և ազգային անվտանգության հիմնախնդիրների վրա:

Քաղաքական ցանցերի տեսության ուսումնասիրմամբ զբաղված գիտնականները սեփական մտորումներում ներառում են կառավարման և քաղաքական որոշումների արտադրման գործընթացի բարոյական չափումները: Սա նշանակում է, որ պետական կառավարման այս տեսությունը մոտ է քաղաքական փիլիսոփայությանը և արժեքային կողմնորոշվածության մոտեցմանը. «Քաղաքական ցանցերի վերաբերյալ կան շատ աշխատություններ, որտեղ ընդունվում է, որ գաղափարները, հավատալիքները, արժեքները և համագործակցային գիտելիքները քաղաքական ցանցերի ուսումնասիրման գործընթացում օժտված են բացատրական իշխանությամբ: Այնուամենայնիվ, քաղաքական ցանցերին առնչվող ռացիոնալիստական ինստիտուցիոնալ մոտեցումների քննադատությունը համապատասխանում է հետևյալ հիմնարար դիրքորոշմանը. գաղափարները, հավատալիքները, արժեքները, նույնականացումը և վստահությունը իրապես ունեն ոչ միայն հիմնարար նշանակություն քաղաքական ցանցերի համար, այլև դրանք կառուցողական սկզբունքներ են ցանցի անդամների միջև փոխհարաբերությունների տրամաբանության համար» [5, էջ 264]:

Հետարդիական հասարակարգի շահերի և հետաքրքրությունների արդիականացման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք փոփոխվում են բարիքի տեսանկյունից: Հարստության նոր տիպերը առաջանում են ոչ միանգամից և, որպես կանոն, պատճառահետևանքային կապ ունեն: Հարստանալու յուրաքանչյուր համակարգ բխում է կարիքի վերաիմաստավորումից և իր հերթին ձևավորում է կյանքի նոր ոճ: Նոր ժամանակների գլխավոր կապիտալը տեղեկատվությունն ու տեխնոլոգիաներն են, կրթության և գիտության ընձեռած հնարավորությունները: Տեղեկատվական դաշտի զարգացման արդյունքում քաղաքացին ստացավ լայն հնարավորություններ իր համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար: Գիտելիքի շրջանառությունը և հասանելիությունը ստեղծում են մասնագիտական շուկային ուղղված նոր հրամայականներ և դերերի բաժանման նոր կարգ: Թոֆլերի կարծիքով, հեռու չէ այն օրը, երբ լիովին կանհետանա բժիշկների և բուժքույրերի, իրավաբանների և դատական ակտերի հարկադիր կատարողի, ոստիկանների և սոցիալական ծառայողների միջև առկա մասնագիտական ունակությունների սահմանը: Այս ամենը մարդկանց մոտ առաջացնում է ընկճախտ, որի պարագայում երևույթների վերաիմաստավորման անհրաժեշտություն է առաջանում. «Պատմության ընթացքում եղել են անհամար հեղափոխություններ, որոնք փոխարինել են հին տեխնիկան նորով, նույնիսկ փոխել են իշխանությունները, սակայն դրա հետ մեկտեղ հասարակությունը գրեթե մնացել է անփոփոխ, այնպես, ինչպես

այն ամբողջացնող մարդիկ: Այնուամենայնիվ, իրական հեղափոխությունները փոխարինել են նորով ոչ միայն տեխնիկան, այլև սոցիալական ինստիտուտները: Ավելին, դրանք ամբողջովին կազմաքանդել և կերպափոխել են այն, ինչը սոցիալական հոգեբաններն անվանում են հասարակության դերային համակարգեր» [2, էջ 20]:

Տեղեկատվությունը շատ կարևոր դերակատարություն ունի հասարակության զարգացման գործընթացում: Այդ պատճառով իշխող ընտրանին, ելնելով քաղաքակրթական առանձնահատկություններից, մշտապես վերահսկողության տակ է պահել տեղեկատվական հոսքերն ու ծավալները, քանի որ, բացի դրանց կառուցողական և գիտական տարատեսակներից, գոյություն ունեն նաև ապակողմնորոշող և երևակայական տեղեկատվական հոսքեր: Ապատեղեկատվության միջոցով պետություններն ու ոչ պետական կազմակերպությունները կարող են նյութական և հեղինակային հարված հասցնել մրցակցին: Ուստի ապատեղեկատվությունն ու մշակութային էքսպանսիան ունեն նյութական արժեք և իրական տնտեսության ու քաղաքականության ծիրում են: Հաղորդակցման և կառավարման թվայնացման արդյունքում ի հայտ են եկել այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են կիբեր-հարձակումները, համակարգչահենությունը, տեղեկատվության առևանգումն ու տարածումը և այլն: Մոլորակի էնդեմիկ բազմազանության խախտումն ու աղավաղումը ապագայում կհանգեցնի մշակութային աղետի. ապագայի սթրեսի սպասումով քաղաքակրթությունները սկսել են նախապատրաստել և մղել վիրտուալ-տեղեկատվական պատերազմներ, որոնք հաճախ մատուցվում են խաղաղ և մարդասիրական մեթոդներով. օրինակ՝ «McDonald's»: Այս իրավիճակում գրոհի ենթարկված քաղաքակրթությունը, տանուլ տալով պահանջմունքների ձևավորման սեփական, առանձնահատուկ մշակույթը, ձեռք է բերում ֆուտուրշոկային (**«shattering stress and disorientation» future shocked**) նախադրյալներ [6]: Ազգային շահի գլխավոր նախադրյալը ինքնորոշված տարածքի առկայությունն է, որը բնութագրվում է ինչպես աշխարհագրական չափումներով, այնպես էլ մշակութային, քաղաքակրթական, էթնոգենետիկ և այլ նախադրյալներով: Միևնույն ժամանակ այդ ինքնորոշված տարածքը կարող է միջազգային իրավունքի սուբյեկտ չլինել: Միջազգայնորեն ճանաչված լինելը, ազգային շահի արդիականացմամբ պայմանավորված, ինքնորոշված տարածքի ընդլայնման փուլ է, որի նվաճելուց հետո ազգը որդեգրում է իր վիրտուալ և ռեալ տարածքների ընդլայնման այլ ռազմավարություններ: Այդպիսի տարածքները տարբեր գիտնականներ տարբեր կերպ են բնութագրում: Համաձայն ակադեմիկոս Ա. Հարությունովի՝ դրանք քաղաքակրթական խորշեր են, որոնք դատարկվելու դեպքում երբեք չեն լցվում: Այլ մշակույթ

չի կարող լցնել մեռած մշակույթի քաղաքակրթական խորշը, և այդ առումով տեղի է ունենում կյանքի շղթայի խզում: Այդպիսի խզումը հանգեցնում է նրան, որ միմյանց են հպվում երկխոսելու քիչ եզրեր ունեցող քաղաքակրթությունների սահմանները, ինչն էլ ստեղծում է բախման հեռանկար:

Յ. Գալթունգը «ինքնորոշված տարածքները» նկարագրում է իբրև ժամանակի և տարածության լայնարձակ հորիզոններ, որոնք ներառված են մշակույթների և նույնիսկ քաղաքակրթությունների՝ մակրոմշակույթների տիրույթներում: Զարգացնելով տեսությունը՝ Գալթունգը եզրահանգում է, որ կան բազմաթիվ զարգացումներ, ուստի եթե մի քաղաքակրթությունը մյուսին պարտադրում է զարգացման իր սահմանումը, ապա ենթարկում է մշակութային բռնության. «Երբ օտար մշակութային կոդը պատվաստվում է մեկ այլ ժողովրդի մշակույթին՝ ընդսմին լեգիտիմացնելով հնարավոր ոչ լեգիտիմը և ընդհակառակը: Լավագույն դեպքում ասվածը մարդկանց շրջանում կարող է շփոթ առաջացնել, վատագույն դեպքում՝ հանգեցնել մշակութային եղեռնի՝ սեփական մշակույթի բնաջնջման, այսինքն՝ համընդհանուր խելացնորության, հավանական է՝ նաև անհատական կամ կոլեկտիվ ինքնասպանության» [1, էջ 215]:

Քաղաքակրթությունը համեմատելով ծաղկի հետ՝ գիտնականը փաստում է, որ յուրաքանչյուր քաղաքակրթություն պետք է սովորի ցանել սեփական սերմերը, ամրապնդել սեփական կոդը, քանի որ այն, ինչպես ծաղիկը, իրականացնելով համապատասխան ծրագիր, փթթում է, որից հետո սկսում է թառամել: Ուստի ազգային շահի արդիականացումը իբրև ինքնորոշված տարածքի ընդլայնման հնարավորություն դիտարկելը բխում է քաղաքակրթական անվտանգության հիմնախնդրից:

Հայ քաղաքակրթության պարագայում ինքնորոշված տարածքի պահպանման և ընդարձակման հիմնախնդիրը լուծում է գտել հայկականության շուրջ ազգային միասնության պահպանման՝ համախմբման սկզբունքով: Այն, որ «հայերին անհնար է հաղթել», հիշատակվում է Դարեհ Առաջինի (մ.թ.ա. 522-468) թողած արձանագրությունում, սակայն անպարտ ցեղին հնարավոր էր պառակտել: Իսկ պառակտումն ու ազգի ներսում անհանդուրժողականության մթնոլորտը դեպի ինքնասպանություն տանող կարճ ճանապարհն է: Գիտնական Ա. Թոյնբին, ուսումնասիրելով քաղաքակրթությունների կործանման դրդապատճառները, բացահայտեց, որ ո՛չ «տարերային աղետները», ո՛չ բնական օրենքները, ո՛չ արտաքին միջավայրի հանդեպ տիրապետության անկումը, ո՛չ արտադրական կամ գեղարվեստական գործիքների բացակայությունը և ո՛չ էլ արտաքին ուժերի մահաբեր հարձակումները պատճառ չեն քաղաքակրթության անկման համար: Քաղաքակրթությունները կործանվում

են ոչ այլ կերպ, քան ինքնասպանությամբ. «Հետևողականորեն բացառելով այդ ոչ պիտանի դրդապատճառները՝ մենք չգտանք այն, ինչ փնտրում էինք: Սակայն մեր կողմից առաջ քաշված վերջին սխալ եզրահանգումը անսպասելիորեն տվեց բանալին: Ցույց տալով այն, որ փլուզված քաղաքակրթությունները դիմավորել են մահը ոչ մարդասպանի ձեռքով, մենք չէինք գտնում պատճառ՝ քննարկելու համար պնդումն այն մասին, որ վերջիններս բռնության զոհ են, և գրեթե բոլոր դեպքերում տրամաբանորեն հանգում էինք նրան, որ պատճառը ինքնասպանությունն է» [3, էջ 495]: Ի հակադրություն անկման՝ քաղաքակրթական աճը Թոյնբին բացատրում է իբրև ստեղծարար փոքրամասնության կամ ստեղծարար անհատների գործունեության արդյունք: Համաձայն այս տեսակետի՝ վերջիններս չեն կարող ինքնակամ առաջ ընթանալ, եթե չհորինեն իրենց ազգակիցներին իրենց հետևից տանելու մեթոդներ: Մարդկության ճնշող մեծամասնությունը չի կարող ակնթարթորեն կերպափոխվել՝ հասնելով իր առաջնորդների մակարդակին: Առաջնորդի խնդիրն այն է, որ իր ազգականներին հետևորդ դարձնի: Հանրագումարի բերելով՝ փաստենք, որ ստեղծարար միտքն ու ինքնորոշումն են արարում տարածություն և ազգային շահ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ***Գալթունգ Յ.,*** Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն: Սևակ Լալայանի ընդհանուր խմբագրությամբ անգլ. (գերմ.) թարգմանեց ՄՋՄԿ փորձագետների խումբը: Եր.: 2005: 456 էջ:

2. ***Тоффлер Э.,*** Революционное богадство. М.: АСТ, 2008. 569 с.

3. ***Тойнби А. Дж.,*** Исследование истории: Возникновение, рост и расад цивилизаций; Пер. с англ. К.Я. Кожурина. М.:АСТ, 2009. 670 с.

4. ***Хабермас Ю.,*** Политические работы. Сост. А.В. Денежкина; пер. с нем. Б.М. Скуратова. М.: Праксис, 2005. 368 с.

5. ***Borzel T.,*** Rediscovering Policy Networks as a Form of Modern Governance, Journal of European Public Policy. 1998. Vol. 5. №2.

6. ***Alvin Toffler,.*** Future Shock. 1970. http://resource.1st.ir/PortalImageDb/ScientificContent/eae29e30-4f13-4016-8dc4-95f8ff7e1209/Future%20Shock.pdf

ГУРГЕН СИМОНЯН
Академия государственного управления РА,
соискатель кафедры политического
управления и политического анализа

МОДЕРНИЗАЦИЯ НАЦИОНАЛЬНЫХ ИНТЕРЕСОВ КАК ВОЗМОЖНОСТЬ РАСШИРЕНИЯ САМООПРЕДИЛИВШЕГОСЯ ПРОСТРАНСТВА

В XXI веке продолжается трансформация социальных систем, которая движется в направлении установления главенствующей роли информационной отрасли.

В условиях нового социального устройства в сфере управления наиболее эффективным методом является сетевое управление. Сетевое управление предполагает интеграцию народа в процесс управления государством, вследствие чего между разными слоями общества происходит конвергенция интересов. В Республике Армения важно стимулировать процесс модернизации национальных интересов в условиях сетевого управления и привлечь каждого гражданина в процесс управления и развития страны.

Ключевые слова: цивилизация, нация, культура, развитие, модернизация, влияние времени, трансформации социальных систем, социокультурная трансформация, демократия, диалог.

GURGEN SIMONYAN
Public Administration Academy of the RA,
Correspondence Degree Seeker at the Chair of
Political Administration and Political Analysis

MODERNIZATION OF NATIONAL INTERESTS AS AN OPPORTUNITY TO EXPAND THE SPACE OF SELF-DETERMINATION

In XXI century the transformation of social systems continues, which moves in the direction of establishing the dominant role of the informational branch.

There is an opinion that in conditions of new social system the most effective method of governance is the network management. Network management supposes the integration of nation in the process of governance. This will lead to the convergence of interests between different strata of society.

In the Republic of Armenia it is important to stimulate the process of modernization of national interests in the course of Network Management, and involve every citizen in the management and development of the country.

Keywords: civilization, nation, culture, development, modernization, the influence of time, transformations of social systems, socio-cultural transformations, democracy, dialogue.